# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

N 281- Ա

12 հոկտեմբերի 2015 թ.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի N 266-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Զինապարտության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով

***որոշում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2015 թվականի հոկտեմբերի 5-ի << Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում 2015 թվականի ձմեռային զորակոչն անցկացնելու միջոցառումների մասին>> N 266-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝
   1) որոշման հավելված 1-ում << Գավառի տարածք>> բաժնում <<Արսեն Հովսեփյան - Գավառի զինվորական կոմիսար, հանձնաժողովի նախագահ>> բառերը փոխարինել <<Արմեն Հովսեփյան - Գավառի զինվորական կոմիսար, հանձնաժողովի նախագահ >> բառերով:
   2) որոշման հավելված 2-ում << Գավառի տարածք>> բաժնում <<Զոյա Ղարիբյան - բուժքույր>> բառերը փոխարինել <<Արփինե Ճահրիկյան - բուժքույր>> բառերով, << Սևանի տարածք>> բաժնում <<Անդրանիկ Արսլանյան - մաշկավեներոլոգ>> բառերը՝ << Հմայակ Ալեքսանյան - մաշկավեներոլոգ >> բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ